

**Հարցաշար**  
**Առարկայական օլիմպիադայի**  
**«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի**  
**մարզային փուլ**  
**9-րդ դասարան - 120 րոպե**

№ 1-8

*Ընտրովի պատասխանով առաջադրանքներ*

1. Հրեաների ո՞ր թագավորն է կառուցել Աստծո տաճարը: *(0,5 միավոր)*  
ա) Դավիթ                      բ) Սողոմոն                      գ) Աբրահամ                      դ) Սավուղ
2. Ո՞ր եկեղեցին չի պատկանում Բողոքական ուղղությանը: *(0,5 միավոր)*  
ա) Լյութերական                      բ) Կալվինական                      գ) Ղպտի                      դ) Մկրտչական
3. ՀՀ տարածքում Հայ Առաքելական եկեղեցու քանի թեմ է գործում: *(0,5 միավոր)*  
ա) 7                      բ) 9                      գ) 11                      դ) 15
4. Ո՞ր գավառներում է քարոզել Բարդուղիմեոս առաքյալը: *(0,5 միավոր)*  
ա) Արտազ և Տարոն                      բ) Աղբակ և Հեթ                      գ) Արտազ և Զարևանդ                      դ) Հեթ և Զարևանդ
5. Ո՞վ է նախորդել Հուսիկ Ա կաթողիկոսին: *(0,5 միավոր)*  
ա) Գրիգոր Ա Լուսավորիչը  
բ) Վրթանեսը  
գ) Արիստակեսը  
դ) Ներսես Ա Մեծը
6. Ո՞ր ժողովում է Գրիգոր Բ Վկայասերը ընտրվել Հայոց կաթողիկոս: *(0,5 միավոր)*  
ա) Աշտիշատի  
բ) Շիրակավանի  
գ) Դվինի  
դ) Ծամնդավի
7. Նշվածներից ո՞ր շարքում ընդգրված հոգևորականներն են Մայիսյան հերոսամարտերի ժամանակ մեկնել ռազմաճակատ հայկական զորամասերի մարտական ոգին բարձրացելու համար: *(0,5 միավոր)*  
ա) Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը և Ներսես եպիսկոպոս Խարախանյանը  
բ) Մովսես արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը և Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը  
գ) Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը և Զավեն եպիսկոպոս Մահտեսի-Բաբայանը  
դ) Զավեն եպիսկոպոս Մահտեսի-Բաբայանը և Ներսես եպիսկոպոս Խարախանյանը

8. Ու՞մ են պատկանում այս խոսքերը. «Ժամանակը բերեց և ժամանակն էլ տարավ այն»:  
(0,5 միավոր)

- ա) Ներսես Աշտարակեցուն
- բ) Ներսես Վարժապետյանին
- գ) Մկրտիչ Խրիմյանին
- դ) Մաղաքիա Օրմանյանին

**№ 9-12**

***Կառուցված պատասխանով առաջադրանքներ***

9. Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը համարվում է լավագույն թարգմանությունը, և արժանացել է «\_\_\_\_\_» անվանը: (1 միավոր)

10. Եկեղեցին բարեկարգելու նպատակով Հովսեփ կաթողիկոսը 443 թ, հրավիրեց \_\_\_\_\_ եկեղեցական ժողովը: (1 միավոր)

11. Պետրոս Գետադարձի պատվերով գրվել է «\_\_\_\_\_», որը, ցավոք, չի պահպանվել: (1 միավոր)

12. Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսն առավել հայտնի է «\_\_\_\_\_» գրքով, որտեղ նա քննադատում է բողոքականներին և կաթոլիկներին: (1 միավոր)

**№ 13-14**

***Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից***

13. Իրադարձությունները համապատասխանեցնել գործիչներին. (1 միավոր)

1. 1165 թ. Կիլիկիայի բյուզանդական զորահրամանատարի հետ բանակցություններ սկսած հայ հոգևորականը:
2. 1446 թ. Ստում հրավիրված եկեղեցական ժողովում կաթողիկոս հռչակված Թոխատի հայոց հոգևոր թեմի առաջնորդը:
3. 1292 թ. Եգիպտական մամլուքների կողմից գերեվված Հայոց կաթողիկոսը:
4. 1797 թ. ռուսական Պավել I կայսրին դիմում ուղարկած Հայոց կաթողիկոսը:

- ա) Ստեփանոս Դ Հռոմկլայեցի
- բ) Ղուկաս Ա Կարնեցի
- գ) Ներսես Շնորհալի
- դ) Եղիազար Այնթափցի
- ե) Կարապետ Եվդոկացի

1	
2	
3	
4	

**14. Բառերը համապատասխանեցնել իմաստներին.**

*(1 միավոր)*

- 1. նարոտ
- 2. բաղարջ
- 3. նավակատիք
- 4. սկիհ

1	
2	
3	
4	

- ա) եկեղեցին բացելու օձման հանդիսավոր արարողություն
- բ) պատարագի արարողության ժամանակ օգտագործվող արծաթե կամ ոսկե բաժակ
- գ) կարմիր և սպիտակ գույնի թելերի հյուսվածք
- դ) եկեղեցում որոշակի կանոնակարգով կատարվող արարողությունների ամբողջություն
- ե) առանց թթխմանի պատրաստված հաց

**№ 15-16**

***Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝  
յուրաքանչյուրը 5 փաստից***

**15. Ժողովները դասավորել ըստ դրանց հրավիրման ժամանակագրական հաջորդականության:**

*(1 միավոր)*

- ա) Հռոմկլայի
- բ) Սեբաստիայի
- գ) Շիրակավանի
- դ) Ծամնդավի
- ե) Շուղրի

1	
2	
3	
4	
5	

**16. Իրադարձությունները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության.**

*(1 միավոր)*

- ա) Թուրքական կառավարության հատուկ հրամանագրով բողոքական եկեղեցու ճանաչումը որպես Հայոց եկեղեցուց անջատ կրոնական համայնք:
- բ) Արմաշի դպրեվանքի հիմնումը:
- գ) Ներսես Աշտարակեցու ընտրվելը Ամենայն Հայոց կաթողիկոս:
- դ) «Արարատ» հանդեսի հրատարակման սկիզբը:
- ե) Հայոց եկեղեցու կանոնադրության «Թիֆլիսյան» նախագծի ուղարկումը Պետերբուրգ:

1	
2	
3	
4	
5	

№ 17

*Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից*

17. «...աստվածավախ, Աստծո պատվիրանների հանդեպ ավանդապահ, մարդասեր, սուրբ, սթափ հայրապետ էր ... նրա նման ուրիշ մեկը երբեք չեղավ Հայոց աշխարհում»:

1) Ո՞վ այս խոսքերի հեղինակը: (1 միավոր)

2) Ու՞մ մասին է խոսքը: (1 միավոր)

№ 18-19

*Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով*

18. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ. (1 x 2 = 2 միավոր)

- 1) Հայոց եկեղեցին հավատարիմ մնալով հին կարգին՝ Հիսուսի Ծննդյան տոնը ամեն տարի նշում է հունվարի 6-ին:
- 2) Վարդանանց տոնի հաջորդ երկուշաբթի առավոտվանից սկսվում է Մեծ Պահքը:
- 3) Տյառնընդառաջի նախորդ երեկոյան մատուցվում է Ճրագալույցի պատարագ:
- 4) Խաչվերացը Հայոց եկեղեցու տաղավար հինգ տոներից է և նշվում է սեպտեմբերի 14-ի մոտակա կիրակի օրը:
- 5) Հայոց եկեղեցին Քրիստոսի Պայծառակերպության տոնը կամ Վարդավառը տոնում է օգոստոսի 15-ի մոտակա կիրակի օրը:


19. Բերված պնդումներից ո՞ր երկուսը Միմեոն Երևանցի կաթողիկոսին չեն վերաբերում. (1 X 2 = 2 միավոր)

- 1) Էջմիածնի կաթողիկոսության իրավունքների վերականգնումը Ռուսաստանի հայոց թեմի նկատմամբ:
- 2) Աբգար դպիր Եվդոկացու գլխավորությամբ պատվիրակության ուղարկումը Եվրոպա:
- 3) Էջմիածինում տպարանի հիմնումը:
- 4) «Արարատ» ամսագիրի տպագրումը:
- 5) Էջմիածինում թղթի գործարանի հիմնումը:


№ 20

*Շարադրանք (2 միավոր)*

Ներկայացնել և գնահատել Հայոց եկեղեցու դերը Մայիսյան հերոսամարտերում: